Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11002/2025-ԳԱ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 3

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 10. Գեղարքունիք – 1 (Սևան, Ճամբարակ) |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.07.2025 -30.09.2025թթ. |
| Ներկայացման օր | 01.10.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 25 շահառուի Գեղարքունիքի մարզի Սևան և Ճամբարակ համայնքներում: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է 8 դեպքի վարում (համայնքապետարանի կողմից սննդային աջակցության քարտերի տրամադրման կազմակերպում, վերափաստագրման կազմակերպում, անվճար բժշկական հետազոտության անցկացման կազմակերպում) և թվով 8 ուղղորդում:
  Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:
  Ազատ ժամանցի կազմակերպման շրջանակներում կազմակերպվել է թվով 2 միջոցառում՝ շահառուների ծննդյան տարեդարձերի նշում, որոնց մասնակցել է թվով 6 շահառու:
  Հաշվետու ժամանակահատվածում հոգեբանական խորհրդատվություն է ստացել թվով 16 շահառու:
  Թվով 2 շահառու օգտվել է լվացքի ծառայության տրամադրումից:
- **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 25 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների, կոմունալ վարձավճարների իրականացման, սննդի կազմակերպման, բարեգործական ճաշարանից կերակրի տուն բերման, անհրաժեշտության դեպքում՝ կերակրման հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:
- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել 25 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող 5 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցրվել է վերջիններիս հսկող բժշկի կողմից նշանակված դեղորայքը և հանձնվել շահառուներին: Թվով 3 շահառու ուղեկցվել է բժշկական տարբեր հաստատություններ՝ հետազոտման, ախտորոշման, բուժման նպատակով, 4 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Պոլիկլինիկայից ստացված դեղորայքի հանձնում շահառուին (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.lu/kvuqae),
- Շահառուի ծննդյան տարեդարձի նշում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/oovijj):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

**Հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված են հետևյալ գործողությունները**

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում արդյունավետ համագործակցություն է իրականացվել ՄՍԾ տարածքային կենտրոնների, համայնքապետարանների, առողջապահական կազմակերպությունների հետ՝ շահառուների հայտնաբերման և արդեն իսկ գրանցված շահառուների խնդիրների կարգավորման նպատակով:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 25/25 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 20 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 5 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 3 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 1 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 4 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 20 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա –2<br>Բ -23 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 25 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 25 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 25 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 6 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 16 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) լվացքի ծառայությու | 2 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «01» 10. 2025թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)